առեալ մարգարիտսն և զայլ այնպիսիս գոհն ի մէջ վարտեացն, և բերին անդրէն զքաւալիէոն ի տէօրմիօլաղզըն, և որչափ հնար էր զամենայն մնաս վաճառականացն տուժեալ, առաքեցին զքաւալիէոն առ Թագաւորն սպանիոյ:...

Յամի տեառն 1767 Ապրիլի 5
[Կ. Պոլիս]

Նուաստ ծառայ
Հ. Անանիա վրդ. Մ[խիթարեան]

ՄՀ.

Հ. Յ. Ջամչեան կը տեղեկագրէ Գումգաբուի հայոց Ս. Աստուածածին եկեղեցւոյն հասած փորձանքը՝ կանրածանօթ բռնութեանց հետևանօք:

Գերաշնորհ գերյարգելի Աբբայ հօր մերոյ և բարեհամբաւ տեառն տեառն Ստեփաննոս վարդապետի ողջոյն

... Յուլիսի 29 ըստ հրամանի Թագաւորին փլուցին զառանց հրամանի շինեալսն յեկեղեցւոջ սուրբ աստուածածնին, որ ի զումզափուն: Քանզի ոմանք տաճիկք եւտուն արզուհալ թէ հայք շինեալ են զնոր ինչ յեկեղեցւոջ. և յանկարծակի եկն ստամպօլ էֆէնտիսին ալայով յեկեղեցին, և ընդ նմա դատախազքն. և չգտեալ ինչ ասէ. ի վաղիւն եկից և քննեցից: Ապա գան և քննեն ըստ հին հեօճէթին, և գտանեն զի առաջի խորանի ուրուք փոխեալ զտախտակսն և շինեալ են քարեղէն: Եւ դարձեալ զաչխանայն և զմի օտայ ևս աւելի քան զչափն շինեալ (անչահք ինչ). և ապա եղև ֆէրման զի զշինեալսն արտաքոյ հէօճէթին փլուսցեն: Եւ ապա փլուցին փութով ի յուլիսի 29: Եւ ուր ուրեք մնասեալ է ի փլուցանելն, զմնասն նորոգեցին. (բայց ոմանք հաչակեցին սուտ, թէ զփլուցեալսն նորոգ շինեալ են): Չպատճառն բազումք բազում ինչ ասեն. բայց ստուգագոյնն այս է. քանզի ի ստամպօլ մերձ այնր եկեղեցւոյն բնակի ոմն տաճիկ անուն նորա ահմէտ պէյ՝ եղբայր Նուրի պէյին: Սա ունէր պարտս աւելի քան զ800 դռուշ ումեմն սառաֆի: Եւ ի ստիպել սառաֆին, ահմէտ պէյն խնդրեալ է ի պատրիարգէն զ800 դռուշ, զի ունիմ զմեծ պիտոյս, ասէ: Իսկ պատրիարգն (ի յազատիլ ի ձեռաց նորա) առաքէ զոմանս առ Նուրի պէյն եղբայրն ահմէտ պէյին. և ասեն. եղբայր քո խնդրէ ի մէնջ զդրամս, բայց եկեղեցին մեր աղքատ է, և պատրիարգն ոչ կարէ տալ ինքնին մինչև ոչ իմասցին խոճանձինք, և դարձեալ, պարտ է մեզ՝ Թապախ տալ շրջել յեկեղեցւոջ մինչև իմանալ ժողովրդոց ամենեցուն թէ ժողովեն դրամս վասն ահմէտ պէյին. եթէ այսմ իրի հաւանիք, արասցուք: Պատասխանէ Նուրի պէյն. Երթայք, անհոգ կացէք. ես հոգամ: Ապաքէն առաքէ առ եղբայր իւր սաստիւ, թէ ո՞չ ամաչես, ասէ: Ապա ահմէտն պէյն առաքէ լուր առ պատրիարգն թէ՝ օսսուն կեավուռ են. տես թէ ես զի՞նչ արարից քեզ և եկեղեցւոյդ, ասէ: Ապա սակաւ սակաւ խօսելով մի մի ընդ տաճկաց, թէ զի՞նչ է այս, զի հայք շինեն նոր իրս յեկեղեցւոջ, և ոչ ոք խօսի, և այս է ընդդէմ հաւատոյ մերոյ, ասէ, մինչև գրգռել զբազումս և տալ արզուհալս և փլուցանել զայնս: Դատախազքն հարիւրաւորք: Եւ փլուցին զխորանն որ ի կողմն պարտիզին, զաչխանան ուր զմատաղն եփեն և զմաղազայ մի: Այժմ լռութիւն է. զկատարածն տեսցուք:... ժանտացաւն սկսաւ բորբոքել օրըստ օրէ...:

1767 Օգոստ.ի 1
[Կ. Պոլիս]

Ն. Ծ. Հ. Յակոբոս Վ. Ջամ. Մխիթարեան